

Քաղաքացիություն չունեցող անձանց
իրավունքների պաշտպանություն
և
ապաքաղաքացիության
կանխարգելում ու կրծատում





ԿՈՆՎԵՆՑԻԱ
ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ԶՈՒՏԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ
ԿԱՐԳԱՎԻճԱԿԻ ՄԱՍԻՆ
28 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 1954թ.

ԿՈՆՎԵՆՑԻԱ
ԱՊԱՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ
30 ՕԳՈՍՏՈՍԻ, 1961թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ
ՓԱԽԱՏԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՅԵՐՈՎ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐԻ
ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԿՈԴՄԻՑ ՆԵՐԱԾԱԿԱՆ ԽՈՍՔՈՎ

ԵՐԵՎԱՆ, ԴԵԿԵMBERԻ 2018

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ՓԱՍԽԱՏԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀԱՍՁՆԱԿԱՏԱՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
(ՄԱԿ ՓԳՀ) ԿՈՂՄԻՑ

Ապաքարաքայիությունը մեծ խնդիր է, որն ըստ ճախճական տվյալների վերաբերում է 12 միլիոն մարդու ամբողջ աշխարհում: Քանի որ քաղաքացիությունը չունեցող անձինք չեն հանդիսանում այն երկրի քաղաքացիներ, որտեղ ապրում են (կամ ցանկացած այլ երկրի), նրանք ստվորաբար չեն ունենում ինքնությունը հաստատող վավեր փաստաթուղթ և հաձախ զրկված են նույնիսկ ամենահիմնական իրավունքներից, ինչպիսիք են աշխատանքի, կացարանի, կրթության, առողջապահական և կենսաթոշակներ ստանալու իրավունքը: Նրանք չունեն սեփականության, բանկում հաշվեհամարի, օրինական ամուսնության և երեխայի ծնունդը գրանցելու իրավունք:

Հաշվի առնելով խնդրի լրջությունը, Միավորված ազգերի կազմակերպությունը 1954 թվականին ընդունեց Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին կոնվենցիան, որը սահմանում է, թե ով է քաղաքացիությունը չունեցող անձը և հաստատում նրա նկատմամբ վերաբերմունքի նվազագույն չափանիշները: Այն լրացվեց 1961 թվականի Ապաքարաքայիության կրծառման մասին կոնվենցիայով: Հայաստանի Հանրապետությունը հանդիսանում է այս երկու կոնվենցիաների անդամ պետություն:

ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեան Միավորված ազգերի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակին վերապահել է գորքալ մանդատ՝ գործելու որպես ամբողջ աշխարհի քաղաքացիություն չունեցող անձանց «պաշտպան» և համագործակցել կառավարությունների հետ՝ կանխելու պապաքաղաքացիությունը, կարգավորելու նման դեաքերը և պաշտպանելու քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքները Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին 1954 կոնվենցիայի համաձայն:

ԵՐԵՎԱՆ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 2011

**ԿՈՆՎԵՆՑԻԱ
Քաղաքացիություն չունեցող անձանց
կարգավիճակի մասին***
(28 սեպտեմբերի, 1954թ.)

Նախարան

Բարձր պայմանավորվող կռողմերը,

ուշադրության առնելով, որ Միավորված ազգերի կազմակերպության կամոնադրությունը և 1948թ. դեկտեմբերի 10-ին Գյավոր ասամբլեայի հաստատած Մարդու իրավունքների համընդհանուր հոչակազիրը հոչակել են այն սկզբունքը, որ բոլոր մարդիկ առանց խորականության օգտվում են հիմնարար իրավունքներից ու ազատություններից,

ուշադրության առնելով, որ Միավորված ազգերի կազմակերպությունը զանազան առիթներով իր խորը մտահոգությունն է արտահայտել քաղաքացիություն չունեցող անձանց նկատմամբ և ջանքեր է գործադրել քաղաքացիություն չունեցող անձանց համար երաշխավորելու այդ հիմնարար իրավունքների ու ազատությունների հնարավորինս լայն օգտագործումը,

ուշադրության առնելով, որ 1951թ. հուլիսի 28-ի Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիան տարածվում է քաղաքացիություն չունեցող այն անձանց վրա միայն, ովքեր նաև փախստականներ են, և որ կան քաղաքացիություն չունեցող շատ անձինք, որոնց վրա այդ կոնվենցիան չի տարածվում,

ուշադրության առնելով, որ քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակը ցանկալի է կարգավորել ու բարելավել միշազգային համաձայնագրով,

համաձայնել են ներքոհիշյալի շուրջ.

* Պաշտոնական թարգմանություն

ԳԼՈՒԽ 1 ՀՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1

Քաղաքացիություն չունեցող անձ հասկացության սահմանումը

1. Սույն Կոնվենցիայում «քաղաքացիություն չունեցող անձ» հասկացությունը նշանակում է անձ, որը չի համարվում քաղաքացի որևէ պետության կողմից՝ դրա օրենսդրության հիման վրա:

2. Սույն Կոնվենցիան չի կիրառվում.

(i) այն անձանց նկատմամբ, որոնք ներկայումս ստանում են Միավորված ազգերի կազմակերպության Փախստականների հարցերով Գլխավոր հանձնակատարից բացի, Միավորված ազգերի կազմակերպության այլ մարմինների կամ հաստատությունների պաշտպանությունը կամ օգնությունը,

(ii) այն անձանց նկատմամբ, ովքեր իրենց քնակության պետության իրավասու իշխանությունների կողմից ձանաչվել են որպես այն իրավունքներն ու պարտականություններն ունեցող, որոնք կապված են տվյալ պետության քաղաքացիությունն ունենալու հետ,

(iii) այն անձանց նկատմամբ, որոնց վերաբերյալ լուրջ հիմքեր կան ենթադրելու, թե նրանք.

(ա) կատարել են խաղաղության դեմ ուղղված հանցագործություն, պատերազմական հանցագործություն կամ մարդկության դեմ ուղղված հանցագործություն, ինչպես դրանք սահմանված են նման հանցագործությունների կապակցությամբ դրույթներ ստեղծելու նպատակով մշակված միջազգային փաստաթղթերում,

(բ) կատարել են ոչ քաղաքական քնությի ժանր հանցագործություն իրենց քնակության երկրից դուրս՝ նախքան այդ երկիր իրենց մուտքի թույլատրումը,

(գ) մեղավոր են ձանաչվել Միավորված ազգերի կազմակերպության նպատակներին ու սկզբունքներին հակասող արարքների համար:

Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին կոնվենցիա (28 սեպտեմբերի, 1954թ.)

Հոդված 2

Հնդիանուր պարտավորությունները

Քաղաքացիություն չունեցող յուրաքանչյուր անձ իր գտնված երկրի նկատմամբ ունի պարտականություններ, որոնք մասնավորապես, պահանջում են, որ նա ենթարկվի օրենքներին ու ենթաօրենսդրական ակտերին, ինչպես նաև հասարակական կարգի պահպանմանն ուղղված միջոցառումներին:

Հոդված 3

Խտրականության անթույլատրելիությունը

Պայմանավորվող պետությունները սույն Կոնվենցիայի դրույթները քաղաքացիություն չունեցող անձանց նկատմամբ կիրառում են՝ առանց ուսացի, կրոնի կամ ծագման երկրի հիմքով խտրականության:

Հոդված 4

Կրոնը

Պայմանավորվող պետություններն իրենց տարածքում գտնվող քաղաքացիություն չունեցող անձանց սեփական կրոնն ազատորեն դավանելու և իրենց երեխաների կրոնական ազատ դաստիարակության հարցում հատկացնում են առնվազն նույնքան բարեհաձ վերաբերմունք, որքան իրենց քաղաքացիներին:

Հոդված 5

Սույն Կոնվենցիայից դուրս տրամադրվող իրավունքները

Սույն Կոնվենցիայում ոչինչ չի խոչընդոտում այն իրավունքներին և արտոնություններին, որոնք Պայմանավորվող պետությունը քաղաքացիություն չունեցող անձանց տրամադրում է սույն Կոնվենցիայից դուրս:

Հոդված 6

«Միևնույն հանգամանքներում» հասկացությունը

Սույն Կոնվենցիայի նպատակի համար «միևնույն հանգամանքներում» հասկացությունը նշանակում է, որ ցանկացած պահանջ (ներառյալ ժամանակավոր բնակությանը կամ բնակության տևողությանը կամ պայմաններին

Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին կոնվենցիա (28 սեպտեմբերի, 1954թ.)

Վերաբերող պահանջները, որին տվալ ամեատը խնդրու առարկա իրավունքից օգտվելու համար պետք է բավարարեր քաղաքացիություն չունեցող անձ չինելու դեպքում, պետք է բավարարվի նրա կողմից, բացառությամբ այն պահանջների, որոնք իրենց բնույթով չեն կարող բավարարվել քաղաքացիություն չունեցող անձի կողմից:

Հոդված 7

Ազատումը փոխադարձության սկզբունքից

1. Բացառությամբ այն դեպքերի, երբ սույն Կոնվենցիան բովանդակում է ավելի բարենպաստ դրույթներ, Պայմանավորվող պետությունը քաղաքացիություն չունեցող անձանց հատկացնում է նոյն վերաբերումը, ինչ ընդհանրապես տրամադրում է օտարերկրացիներին:
2. Երեք տարվա բնակրությունից հետո քաղաքացիություն չունեցող բոլոր անձինք Պայմանավորվող պետությունների տարածքում ազատվում են օրենսդրության սահմանված փոխադարձության պահանջից:
3. Պայմանավորվող յուրաքանչյուր պետություն շարունակում է քաղաքացիություն չունեցող անձանց տրամադրել այն իրավունքներն ու արտոնությունները, որոնցով նրանք արդեն օժտված են, փոխադարձության բացակայության դեպքում, սույն Կոնվենցիայի՝ այդ պետության համար ուժի մեջ մտնելու օրը:
4. Պայմանավորվող պետությունները բարեհած են վերաբերվում քաղաքացիություն չունեցող անձանց, փոխադարձության բացակայությամբ, բացի 2 և 3-րդ կետերով տրամադրվող իրավունքներից ու արտոնություններից, այլ իրավունքներ ու արտոնություններ տրամադրելու և փոխադարձությունից ազատումը քաղաքացիություն չունեցող այն անձանց վրա տարածելու հնարավորությանը, որոնք չեն բավարարում 2-րդ և 3-րդ կետերում նշված պայմանները:
5. 2-րդ և 3-րդ կետերի դրույթները կիրավում են ինչպես սույն Կոնվենցիայի 13, 18, 19, 21 և 22-րդ հոդվածներում նշված իրավունքների ու արտոնությունների, այնպես էլ այն իրավունքների ու արտոնությունների վերաբերմամբ, որոնք սույն Կոնվենցիայով նախատեսված չեն:

Հոդված 8

Ազատումը բացառիկ միջոցառումներից

Այն բացառիկ միջոցառումները, որոնք կարող են կիրառվել ընդդեմ օտար պետության քաղաքացիների անձի, սեփականության կամ շահերի, Պայմանագրովող պետությունները չեն կիրառում քաղաքացիություն չունեցող անձի նկատմամբ՝ պարզապես հաշվի առնելով նախկինում նրա՝ տվյալ երկրի քաղաքացիություն ունենալը: Պայմանագրովող պետությունները, որոնց օրենսդրությունը թույլ չի տալիս սույն հոդվածում արտահայտված ընդհանուր սկզբունքի կիրառմը, համապատասխան դեպքերում նախատեսում են ազատում՝ ի շահ նման քաղաքացիություն չունեցող անձանց:

Հոդված 9

Ժամանակավոր միջոցառումները

Սույն Կոնվենցիայում ոչինչ չի խոչընդոտում Պայմանագրովող պետությանը՝ պատերազմի ժամանակ կամ այլ արտակարգ ու բացառիկ հանգամանքներում որոշակի անձի նկատմամբ ձեռնարկելու ժամանակավոր միջոցառումները, որոնք նաև էսկան է համարում ազգային անվտանգության համար, քանի դեռ տվյալ պետությունը չի որոշել, որ հիշյալ անձն իշխապես քաղաքացիություն չունեցող անձ է, և նրա դեպքում նման միջոցառումների շարունակականությունն անհրաժեշտ է ի շահ ազգային անվտանգության:

Հոդված 10

Բնակության անընդհատությունը

1. Եթե քաղաքացիություն չունեցող անձը երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում թոնի տեղահանվել ու տեղափոխվել է Պայմանագրովող պետության տարածք և բնակվում է այնտեղ, ապա նման ստիպողական բնակեցման ժամանակահատվածը համարվում է օրինական բնակություն տվյալ տարածքում:
2. Եթե քաղաքացիություն չունեցող անձը երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում թոնի տեղահանվել է Պայմանագրովող պետության տարածքից և, նախքան սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելը, վերադարձել է այնտեղ՝ բնակություն հաստատելու նպատակով, ապա նման ստիպողական տեղահանմանը նախորդած և հաջորդած բնակության ժամանակահատվածները համարվում են մեկ անընդհատ ժամանակահատված ցանկացած նպատակով, որի համար անընդհատ բնակություն է պահանջվում:

Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին կոնվենցիա (28 սեպտեմբերի, 1954թ.)

Հոդված 11

Քաղաքացիություն չունեցող նավաստիները

Պայմանավորվող կողմի դրոշի ներքո նավարկող նավի անձնակազմում կանոնավոր ծառայող քաղաքացիություն չունեցող անձանց դեպքում այդ պետությունը բարեհաձ է վերաբերվում իր տարածքում նրանց գտնվելուն և ձամփորդական փաստաթղթերի տրամադրմանը կամ իր տարածքում նրանց ժամանակավոր ընդունմանը՝ մասնավորապես, նրանց բնակեցումը որևէ այլ երկիր հեշտացնելու նպատակով:

ԳԼՈՒԽ 2

ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ

Հոդված 12

Անձնական կարգավիճակը

1. Քաղաքացիություն չունեցող անձի անձնական կարգավիճակը որոշվում է նրա մշտական բնակության երկրի օրենսդրությամբ կամ, եթե նա չունի մշտական բնակության վայր, բնակության երկրի օրենսդրությամբ:
2. Քաղաքացիություն չունեցող անձի կողմից նախկինում ձեռք բերված և անձնական կարգավիճակից կախված իրավունքները, մասնավորապես, ամուսնության հետ կապված իրավունքները, հարգվում են Պայմանավորվող պետության կողմից, անհրաժեշտության դեպքում, տվյալ պետության օրենսդրությամբ պահանջվող ձևականություններին համապատասխան, պայմանով, որ խնդրու առարկա իրավունքն այդ պետության օրենսդրությամբ կձանաչվեր, եթե անձը չիներ քաղաքացիություն չունեցող անձ:

Հոդված 13

Շարժական և անշարժ գույքը

Պայմանավորվող պետությունները շարժական և անշարժ գույքի ու դրան առնչվող այլ իրավունքների ձեռքբերման, ինչպես նաև վարձակալության և շարժական ու անշարժ գույքի հետ կապված այլ պայմանագրերի կապակցությամբ քաղաքացիություն չունեցող անձին հատկացնում են հնարավորինս և, ամեն դեպքում, ոչ պակաս բարեհաձ վերաբերմունք, քան նույն հանգամանքներում ընդհանրապես հատկացվում է օտարերկրացիներին:

Հոդված 14

Հեղինակային իրավունքները և արդյունաբերական սեփականությունը

Արդյունաբերական սեփականության, ինչպիսին են գյուտերը, նախագծերն ու մոդելները, ապրանքանշանները, ֆիրմային անվանումները, ինչպէս նաև գրական, արվեստի և գիտական ստեղծագործությունների նկատմամբ իրավունքների պաշտպանության կապակցությամբ քաղաքացիություն չունեցող անձին իր սովորական բնակության երկրում տրամադրվում է նույն պաշտպանությունը, ինչ այդ երկրի քաղաքացիներին: Ցանկացած այլ պայմանավորվող պետության տարածքում նրան տրամադրվում է նույն պաշտպանությունը, ինչ այդ տարածքում այն երկրի քաղաքացիներին, որտեղ նաև ունի իր սովորական բնակության վայրը:

Հոդված 15

Միավորումներ կազմելու իրավունքը

Ոչ քաղաքական և շահույթ չհետապնդող միությունների և արհմիությունների կազմակցությամբ Պայմանավորվող պետություններն իրենց տարածքում օրինականորեն գտնվող քաղաքացիություն չունեցող անձանց հատկացնում են հնարավորինս և, ամեն դեպքում, ոչ պակաս՝ քարեհած վերաբերմունք, քան միևնույն հանգամանքներում հատկացվում է օտարերկրացիներին:

Հոդված 16

Դատարան դիմելու իրավունքը

1. Յուրաքանչյուր քաղաքացիություն չունեցող անձ իրավունք ունի ազատորեն դիմելու բոլոր Պայմանավորվող պետությունների տարածքում գտնվող դատարաններին:
2. Այն Պայմանավորվող պետությունում, որտեղ քաղաքացիություն չունեցող անձն ունի իր սովորական բնակության վայրը, դատարան դիմելու հետ կապված հարցերում նա օգտվում է նույն վերաբերմունքից, ինչ քաղաքացիները, ներառյալ իրավաբանական օգնությունն ու ազատումը cautio judicatum solvi-hg:
3. 2-րդ կետում նշված հարցերով, քաղաքացիություն չունեցող անձն իր սովորական բնակության երկրից դուրս օգտվում է իր սովորական բնակության երկրի քաղաքացիներին հատկացվող վերաբերմունքից:

ԳԼՈՒԽ 3 ՇԱՀՈՒՅԹ ԱՊԱՀՈՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔ

Հոդված 17

Վարձով աշխատանքը

- Պայմանավորվող պետություններն իրենց տարածքում օրինական կարգով գտնվող քաղաքացիություն չունեցող անձանց, աշխատավարձով վարձատրվող աշխատանքով զբաղվելու իրավունքի կապակցությամբ, հատկացնում են հնարավորինս և, ամեն դեպքում, ոչ պակաս բարեհաձ վերաբերմունք, քան միևնույն հանգամանքներում տրամադրվում է օտարերկրացիներին:
- Աշխատավարձով վարձատրվող աշխատանքի կապակցությամբ Պայմանավորվող պետությունները բարեհաձ են վերաբերվում բոլոր քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքները քաղաքացիների իրավունքներին հավասարացնելուն, մասնավորապես, այն քաղաքացիություն չունեցող անձանց, ովքեր իրենց տարածք մուտք են գործել աշխատուժի հավաքագրման ծրագրերի կամ ներգաղթի ծրագրերի հանաձայն:

Հոդված 18

Անհատ ձեռնարկատիրությունը

Պայմանավորվող պետություններն իրենց տարածքում օրինական կարգով բնակվող քաղաքացիություն չունեցող անձին իր սեփական միջոցներով գլուխատնատեսությամբ, արդյունաբերությամբ, արհեստներով ու առևտորով զբաղվելու և առևտորային ու արդյունաբերական ընկերություններ հիմնելու իրավունքի կապակցությամբ հատկացնում են հնարավորինս և, ամեն դեպքում, ոչ պակաս բարեհաձ վերաբերմունք, քան միևնույն հանգամանքներում ընդհանրապես հատկացվում է օտարերկրացիներին:

Հոդված 19

Ազատ մասնագիտությունները

- Պայմանավորվող յուրաքանչյուր պետություն իր տարածքում օրինական կարգով բնակվող այն քաղաքացիություն չունեցող անձանց, ովքեր ունեն այդ պետության իրավասու իշխանությունների կողմից ձանաչված դիպլոմներ և ովքեր ցանկանում են զբաղվել ազատ մաս-

Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին կոնվենցիա (28 սեպտեմբերի, 1954թ.)

նազիստությամբ, հատկացնում է հնարավորինս և, ամեն դեպքում, ոչ պակաս բարեհած վերաբերմունք, քան միևնույն հանգամանքներում ընդհանրապես հատկացվում է օտարերկրացիներին:

ԳԼՈՒԽ 4 ՍՈՅԻԱՀԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ

Հոդված 20

Չափաբաժիններ

Այստեղ, որտեղ գոյություն ունի չափաբաժինների համակարգ, որը կիրառվում է ողջ բնակչության նկատմամբ և կարգավորում սակավաբանակ պարենի բաշխումը, քաղաքացիություն չունեցող անձանց հատկացվում նույն վերաբերմունքը, ինչ քաղաքացիներին:

Հոդված 21

Բնակարանով ապահովումը

Բնակարանով ապահովելու կապակցությամբ Պայմանավորվող պետություններն այնքանով, որքանով հարցը կարգավորվում է օրենքներով կամ ենթաօրենսդրական ակտերով կամ հանդիսանում է Պայմանավորվող պետությունների հանրային իշխանությունների վերահսկողության առարկա, իրենց տարածքում օրինական կարգով բնակվող քաղաքացիություն չունեցող անձանց հատկացնում են հնարավորինս և, ամեն դեպքում, ոչ պակաս բարեհած վերաբերմունք, քան միևնույն հանգամանքներում ընդհանրապես հատկացվում է օտարերկրացիներին:

Հոդված 22

Հանրային կրթությունը

1. Տարրական կրթության կապակցությամբ Պայմանավորվող պետությունները քաղաքացիություն չունեցող անձանց հատկացնում են նույն վերաբերմունքը, ինչ իրենց քաղաքացիներին:
2. Պայմանավորվող պետությունները տարրական կրթությունից տարբեր կրթության և, մասնավորապես, ուսուցման մատչելիության, օտարերկրյա դպրոցական վկայագրերի, դիպլոմների ու գիտական աստիճանների ձանաշման, տուրքերից ու վճարումներից ազատման

Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին կոնվենցիա (28 սեպտեմբերի, 1954թ.)

և կրթաթոշակների շնորհման կապակցությամբ քաղաքացիություն չունեցող անձանց հատկացնում են հնարավորին և, ամեն դեպքում, ոչ պակաս բարեհած վերաբերմունք, քան միևնույն հանգամանքներում ընդհանրապես հատկացվում է օտարերկրացիներին:

Հոդված 23

Հանրային օժանդակություն

Պայմանավորվող պետությունները հանրային օժանդակության և օգնության կապակցությամբ իրենց տարածքում օրինական կարգով բնակվող քաղաքացիություն չունեցող անձանց հատկացնում են նույն վերաբերմունքը, ինչ իրենց քաղաքացիներին:

Հոդված 24

Աշխատանքային օրենսդրությունը և սոցիալական ապահովությունը

1. Պայմանավորվող պետություններն իրենց տարածքում օրինական կարգով բնակվող քաղաքացիություն չունեցող անձանց հետևյալ հարցերի կապակցությամբ հատկացնում են նույն վերաբերմունքը, ինչ իրենց քաղաքացիներին.

(ա) այնքանով, որքանով նման հարցերը կարգավորվում են օրենքներով կամ ենթաօրենսդրական ակտերով կամ վարչական իշխանությունների վերահսկողության առարկա են՝ վարձատրության, ներառյալ վարձատրության մաս կազմող ընտանեկան նպաստները, աշխատաժամերի, արտաժամյա աշխատանքի, վարձատրվող արձակուրդի, տնայնագործ աշխատանքի սահմանափակումների, աշխատերու, աշխատերու կամ վերապատրաստման նվազագույն տարիքի, կանանց ու պատանեկան տարիքի անձանց աշխատանքի և կողեկտիվ պայմանագրերի արտոնությունների կապակցությամբ,

(բ) սոցիալական ապահովության կապակցությամբ (աշխատանքային վնասվածք, մասնագիտական հիվանդություններ, մայրություն, հիվանդություն, անաշխատունակություն, ծերություն, մահ, գործազրկություն, ընտանեկան պատրաստություններ և այլ դեպքեր, որոնք ներպետական օրենքների կամ ենթաօրենսդրական ակտերի համաձայն նախատեսվում են սոցիալական ապահովության ծրագրով՝ հետևյալ սահմանափակումներով.

- (i) կարող է գրքել ձեռք բերված իրավունքների և ձեռքբերման գրքընթացում գտնվող իրավունքների պահպանման համապատասխան կարգ,
- (ii) բնակության երկրի ներպետական օրենքներով կամ ենթաօրենսդրական ակտերով կարող է սահմանվել հատուկ կարգ այն նպաստների կամ նպաստների մի մասի առնչությամբ, որոնք ամբողջապես վճարվում են պետական հիմնադրամների հաշվին, ինչպես նաև այն անձանց վճարվող նպաստների առնչությամբ, ովքեր չեն բավարարում բնականոն կարգով կենսաթոշակ ստանալու համար նախատեսված վճարումների պայմանները:
2. Աշխատանքային վճառվածքի կամ մասնագիտական հիվանդության հետևանքով քաղաքացիություն չունեցող անձի մահվան դեպքում տրվող փոխհատուցման իրավունքի վրա չի ազդում այն հանգամանքը, որ փոխհատուցում ստացողի մշտական բնակության վայրը գտնվում է Պայմանավորվող պետության տարածքից դուրս:
3. Պայմանավորվող պետությունները քաղաքացիություն չունեցող անձանց վրա տարածում են իրենց միջև կնքված կամ կնքվելիք պայմանագրերով նախատեսվող արտոնությունները, որոնք վերաբերում են սոցիալական ապահովության ոլորտում ձեռք բերված իրավունքների և ձեռքբերման գրքընթացում գտնվող իրավունքների պահպանմանը՝ նույնախի պայմաններով, ինչ կիրավիս են նշված պայմանագրերն սոորագրող պետությունների քաղաքացիների նկատմամբ:
4. Պայմանավորվող պետությունները պետք է բարեհաձ վերաբերվեն Պայմանավորվող պետությունների և պայմանագրին չմասնակցող պետությունների միջև երբևէ կնքվող նմանատիպ պայմանագրերով նախատեսված նպաստները քաղաքացիություն չունեցող անձանց վրա հնարավորինս տարածելուն:

Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին կոնվենցիա (28 սեպտեմբերի, 1954թ.)

ԳԼՈՒԽ 5 ՎԱՐՉԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Հոդված 25

Վարչական օժանդակությունը

- Եթե քաղաքացիություն չունեցող անձի կողմից որևէ իրավունքից օգտվելը, որպես կանոն, պահանջում է օտարերկրյա պետության իշխանությունների աջակցություն, որին նա դիմել չի կարող, ապա Պայմանագրովով պետությունը, որի տարածքում նա բնակվում է, հնարավորություն է տպիս, որպեսզի այդ աջակցությունը տրամադրվի իր իսկ մարմինների կողմից:
- 1-ին կետում նշված մարմինը կամ մարմինները քաղաքացիություն չունեցող անձանց տրամադրում են այն փաստաթղթերը կամ վկայագրերը կամ իրենց վերահսկողությամբ ապահովում են դրանց տրամադրումը, որոնք, որպես կանոն, կտրամադրվելին օտարերկրացիներին իրենց ներպետական իշխանությունների կողմից կամ միջոցով:
- Նշան ձևով տրամադրված փաստաթղթերը կամ վկայագրերը ծառայում են որպես օտարերկրացիներին իրենց ներպետական իշխանությունների կողմից տրամադրված պաշտոնական փաստաթղթեր, և, հակառակ ապացույցների բացակայության դեպքում, պետք է արժանանան փատահության:
- Այնպիսի բացառիկ վերաբերմունքից բացի, որը կարող է հատկացվել կարիքավոր անձանց, վերոհիշյալ ծառայությունների դիմաց կարող են գանձվել տուրքեր, բայց դրանք պետք է լինեն չափավոր և համապատասխանեն այն տուրքերին, որոնք նման ծառայությունների դիմաց գանձվում են տվյալ երկի քաղաքացիներից:
- Սույն հոդվածի դրույթները չեն խոչընդոտում 27-րդ և 28-րդ հոդվածների դրույթներին:

Հոդված 26

Տեղաշարժի ազատությունը

Պայմանագրովով յուրաքանչյուր պետություն իր տարածքում օրինական կարգով բնակվող քաղաքացիություն չունեցող անձանց տրամադրում է իրենց բնակության վայրի ընտրության և իր տարածքում ազատորեն տե-

Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին կոնվենցիա (28 սեպտեմբերի, 1954թ.)

դաշտվելու իրավունք՝ միևնույն հանգամանքներում օտարերկրացիների նկատմամբ ընդհանրապես կիրառվող բոլոր կանոնների պահպանմամբ:

Հոդված 27

Ինքնուրժյան վկայականներ

Պայմանավորվող պետություններն ինքնուրժյան վկայականներ են տալիս իրենց տարածքում գտնվող ցանկացած քաղաքացիություն չունեցող անձի, որը չունի վավերական ձամփորդական փաստաթուղթ:

Հոդված 28

Ճամփորդական փաստաթուղթերը

1. Պայմանավորվող պետություններն իրենց տարածքում օրինական կարգով բնակվող քաղաքացիություն չունեցող անձանց տալիս են ձամփորդական փաստաթուղթեր՝ իրենց տարածքից դուրս ձամփորդելու նպատակով, եթե ազգային անվտանգության և հասարակական կարգի շահերից բխող հիմնավոր պատճառներն այլ բան չեն պահանջում, և նշված փաստաթուղթերի առնչությամբ կիրառվում են սույն Կոնվենցիայի ցանկի դրույթները: Պայմանավորվող պետությունները կարող են նման ձամփորդական փաստաթուղթ տալ իրենց տարածքում գտնվող ցանկացած այլ քաղաքացիություն չունեցող անձի, մասնավորապես, նրանք բարեհած են վերաբերվում իրենց տարածքում գտնվող այն քաղաքացիություն չունեցող անձանց նման ձամփորդական փաստաթուղթ տալուն, ովքեր ի վիճակի չեն ձամփորդական փաստաթուղթ ստանալ իրենց օրինական բնակության երկրում:

Հոդված 29

Պետական գանձումները

1. Պայմանավորվող պետությունները քաղաքացիություն չունեցող անձանցից չեն գանձում մաքսեր, վճարներ կամ հարկեր, որոնք այլ կամ ավելի բարձր են, քան նրանք, որ միևնույն հանգամանքներում գանձվում են կամ կարող են գանձվել իրենց քաղաքացիներից:
2. Նախորդ կետում ոչինչ չի խոչընդոտում քաղաքացիություն չունեցող անձանց նկատմամբ այն օրենքների ու ենթաօրենդրական ակտերի կիրառմանը, ըստ որոնց գանձումներ են կատարվում օտարերկրացիներին վարչական փաստաթուղթեր, ներառյալ՝ ինքնուրժյան վկայականներ տալու համար:

Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին կոնվենցիա (28 սեպտեմբերի, 1954թ.)

Հոդված 30

Գույքի տեղափոխումը

- Պայմանավորվող պետությունները, իր օրենքներին և ենթաօրենսդրական ակտերին համապատասխան, քաղաքացիություն չունեցող անձանց թույլատրում է իր տարածք թերած գույքը տեղափոխել մեկ այլ երկիր, որը նրանք ընդունվել են բնակության նպատակով:
- Պայմանավորվող պետությունները բարեհած են վերաբերվում քաղաքացիություն չունեցող անձանց այն գույքի, որտեղ էլ այն գտնվելիս լինի, տեղափոխման թույլատրության միջնորդություններին, որը նրանց անհրաժեշտ է այլ երկրում, որը նրանց մուտքը թույլատրվել է բնակություն հաստատելու համար:

Հոդված 31

Վտարումը

- Պայմանավորվող պետությունները չեն վտարում իրենց տարածքում օրինական կարգով գտնվող քաղաքացիություն չունեցող անձանց, բացի ազգային անվտանգությամբ կամ հասարակական կարգի պահպանությամբ պայմանավորված դեպքերից:
- Քաղաքացիություն չունեցող նման անձի վտարումը կատարվում է միայն օրենքին համապատասխան կարգով ընդունված որոշման հիման վրա: Բացի այն դեպքերից, երբ ազգային անվտանգության անհաղթահարելի հիմնավորումներն այլ բան են պահանջում, քաղաքացիություն չունեցող անձին թույլատրվում է ի արդարացումն իրեն ներկայացնել ապացույց և բողոքարկել իրավասու իշխանությանը կամ իրավասու իշխանության կողմից հասուլ նշանակված անձին կամ անձանց և այդ նպատակով ներկայացվել նրանց առջև:
- Պայմանավորվող պետությունները նման քաղաքացիություն չունեցող անձին բավարար ժամանակ են տալիս՝ այդ ընթացքում ստանալու օրինական կարգով մեկ այլ երկիր մուտք գործելու թույլտվություն: Պայմանավորվող պետություններին իրավունք է վերապահվում այդ ընթացքում կիրառել այնպիսի ներքին միջոցառումներ, ինչպիսիք նրանք անհրաժեշտ կհանարեն:

Հոդված 32

Հպատակագրումը

Պայմանավորվող պետությունները հնարավորինս հեշտացնում են քաղաքացիություն չունեցող անձանց միաձուլումն ու հպատակագրումը։ Նրանք, մասնավորապես, գործադրում են ամեն ջանք, որպեսզի արագացնեն հպատակագրման գործընթացը և հնարավորինս նվազեցնեն դրա հետ կապված գանձումներն ու ծախսերը։

ԳԼՈՒԽ 6 ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 33

Ներպետական օրենսդրության վերաբերյալ տեղեկատվությունը

Պայմանավորվող պետությունները Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին տեղեկացնում են այն օրենքների և ենթաօրենսդրական ակտերի մասին, որ նրանք կարող են ընդունել՝ սույն Կոնվենցիայի կատարումն ապահովելու համար։

Հոդված 34

Վեճերի կարգավորումը

Սույն Կոնվենցիայի մասնակիցների միջև դրա մեկնաբանմանը կամ կիրառմանը վերաբերող ցանկացած վեճ, որը հնարավոր չէ լուծել այլ միջոցներով, վեճի կողմերից ցանկացածի պահանջով հանձնվում է Միջազգային դատարանին։

Հոդված 35

Ստորագրումը, վավերացումը և միանալը

1. Սույն Կոնվենցիան ստորագրման համար բաց է Միավորված ազգերի կազմակերպության կենտրոնակայանում, մինչև 1955 թվականի դեկտեմբերի 31-ը։
2. Սույն Կոնվենցիան բաց է ստորագրման。
 - (ա) Միավորված ազգերի կազմակերպության ցանկացած անդամ պետության անունից,

Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին կոնվենցիա (28 սեպտեմբերի, 1954թ.)

(թ) Միավորված ազգերի կազմակերպության՝ Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի վերաբերյալ խորհրդաժողովին մասնակցելու հրավեր ստացած ցանկացած այլ պետության անունից, և

(զ) ցանկացած պետության անունից, որին Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեան հրավիրում է այն սոուրագրելու կամ նրան միանալու:

3. Սույն Կոնվենցիան վավերացվում է, և վավերագրերն ի պահ են հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին:
4. Սույն Կոնվենցիան միանալու նպատակով քայլ է սույն հոդվածի 2-րդ կետում հիշատակված պետությունների համար: Միանալը կատարվում է միանալու մասին փաստաթուղթը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ի պահ հանձնելու միջոցով:

Հոդված 36

Տարածքային կիրառման դրույթը

1. Ստորագրման, վավերացման կամ միանալու ժամանակ ցանկացած պետություն կարող է հայտարարել, որ սույն Կոնվենցիան տարածվում է այն բոլոր տարածքների կամ դրանցից ցանկացածի վրա, որոնց միջազգային հարաբերությունների համար ինքը պատասխանատու է: Նման հայտարարությունն ուժի մեջ է մտնում, եթե Կոնվենցիան ուժի մեջ է մտնում տվյալ պետության համար:
2. Դրանից հետո ցանկացած ժամանակ նման տարածումը կատարվում է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին հասցեագրված ծանուցման միջոցով և ուժի մեջ է մտնում Միավորված ազգերի Գլխավոր քարտուղարի կողմից ծանուցումն ստանալուց հետո իննուուներորդ օրվանից կամ տվյալ պետության համար սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու օրվանից, որն ավելի ոչ լինի:
3. Այն տարածքների առնչությամբ, որոնց վրա սույն Կոնվենցիան չի տարածվում ստորագրման, վավերացման կամ միանալու ժամանակ, յուրաքանչյուր պետություն քննության է առնում սույն Կոնվենցիայի կիրառումն այդ տարածքների վրա տարածելու նպատակով անհրաժեշտ քայլեր ձեռնարկելու հնարավորությունը, պայմանով, որ դա կատարվի նման տարածքների կառավարությունների համաձայնությամբ, եթե այդ անհրաժեշտ է սահմանադրական պատճառներով:

Հոդված 37

Դաշնային դրույթը

Դաշնային կամ ոչ ունիտար պետության դեպքում գործում են հետևյալ դրույթները.

(ա) սույն Կոնվենցիայի այն հոդվածները, որոնք ենթակա են դաշնային օրենսդիր իշխանության օրենսդրական իրավագործությանը, դաշնային կառավարության պարտավորություններն այս շրջանակներում նույնն են, ինչ դաշնային պետություն չհանդիսացող մասնակիցներինը,

(բ) սույն Կոնվենցիայի այն հոդվածները, որոնք ենթակա են պետության կազմի մեջ մտնող նահանգների, գավառների կամ կանտոնների օրենսդրական իրավագործությանը, որոնք, ըստ դաշնային սահմանդրական համակարգի, պարտավոր չեն կիրառել համապատասխան օրենսդրական միջոցառումներ, դաշնային կառավարությունը նպաստավոր հանձնարարականի հետ մրասին հնարավորինս վաղ ներկայացնում է նահանգների, գավառների կամ կանտոնների համապատասխան իշխանությունների ուշադրությանը,

(գ) սույն Կոնվենցիայի մասնակից դաշնային պետությունը ցանկացած այլ Պայմանագործվող պետության՝ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարի միջոցով փոխանցված խնդրանքով, հաղորդագրություն է տրամադրում սույն Կոնվենցիայի ցանկացած դրույթի առնչությամբ դաշնության և նրա բաղկացուցիչ միավորների օրենսդրության ու պրակտիկայի վերաբերյալ՝ նշելով, թե ինչ չափով է այդ դրույթը իրագործվել օրենսդրական կամ այլ գործողությունների միջոցով:

Հոդված 38

Վերապահումները

- Ստորագրման, վավերացման կամ միանալու ժամանակ ցանկացած պետություն կարող է վերապահումներ կատարել Կոնվենցիայի հոդվածների վերաբերյալ, բացի 1, 3, 4, 16 (1), 33-46-րդ հոդվածներից:
- Սույն հոդվածի 1-ին կետի համաձայն վերապահում կատարած ցանկացած պետություն կարող է ցանկացած ժամանակ հետ վերցնել վերապահումը՝ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին հասցեագրված ծանուցման միջոցով:

Հոդված 39

Ուժի մեջ մտնելը

1. Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում 6-րդ վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելու օրվանից հետո 90-րդ օրը:
2. 6-րդ վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելուց հետո Կոնվենցիան վավերացրած կամ դրան միացած ցանկացած պետության համար Կոնվենցիան ուժի մեջ է մտնում այդ պետության կողմից իր վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելու օրվանից սկսած 90-րդ օրը:

Հոդված 40

Չեղյալ հայտարարումը

1. Պայմանավորվող ցանկացած պետություն կարող է ցանկացած ժամանակ չեղյալ հայտարարել սույն Կոնվենցիան՝ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին հասցեագրված ծանուցման միջոցով:
2. Համապատասխան Պայմանավորվող պետության համար չեղյալ հայտարարումն ուժի մեջ է մտնում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարի կողմից ծանուցումն ստանալու օրվանից մեկ տարի անց:
3. Ցանկացած պետություն, որը 36-րդ հոդվածին համապատասխան հայտարարություն կամ ծանուցում է արել, կարող է դրանից հետո, ցանկացած ժամանակ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին հասցեագրված ծանուցման միջոցով հայտարարել, որ Կոնվենցիան դադարում է տարածվել տվյալ տարածքի վրա Գլխավոր քարտուղարի կողմից նշված ծանուցումն ստանալուց 1 տարի անց:

Հոդված 41

Վերանայումը

1. Պայմանավորվող ցանկացած պետություն կարող է, Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին հասցեագրված ծանուցման միջոցով, ցանկացած ժամանակ պահանջել սույն Կոնվենցիայի վերանայում:

2. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեան նման պահանջի կապակցությամբ հանձնարարում է ձեռնարկել համապատասխան քայլեր, եթե այդպիսիները կան:

Հոդված 42

Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարի ծանուցումները

Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը Կազմակերպության բոլոր անդամներին և 35-րդ հոդվածում հիշատակված ոչ անդամ պետություններին տեղեկացնում է.

- (ա) 35-րդ հոդվածին համապատասխան ստորագրումների, վավերացումների և միանալու մասին,
- (բ) 36-րդ հոդվածին համապատասխան հայտարարությունների և ծանուցումների մասին,
- (շ) 38-րդ հոդվածին համապատասխան վերապահումների և վերապահումները հետ վերցնելու մասին,
- (դ) սույն Կոնվենցիայի՝ 39-րդ հոդվածին համապատասխան ուժի մեջ մտնելու օրվա մասին,
- (ե) 40-րդ հոդվածին համապատասխան չեղյալ հայտարարումների և ծանուցումների մասին,
- (զ) 41-րդ հոդվածին համապատասխան վերանայման պահանջների մասին:

Ի հավաստումն որի՝ ներքոստորագրյալները, պատշաճ կերպով լիազորված լինելով իրենց կառավարությունների անունից, ստորագրեցին սույն Կոնվենցիան:

Կատարված է Նյու Յորքում, 1954 թվականի սեպտեմբերի 28-ին, մեկ օրինակով՝ որի անգլերեն, խաղաներեն և ֆրանսերեն տեքստերը հավասարագոր են, և ի պահ է հանձնված Միավորված ազգերի կազմակերպության արխիվ. նրա հաստատված պատճեններին ուղարկվում են Միավորված ազգերի կազմակերպության բոլոր անդամներին և 35-րդ հոդվածում հիշատակված ոչ անդամ պետություններին:

ՑԱՆԿ

Կետ 1

1. Սույն կոնվենցիայի 28-րդ հոդվածում նշված ճամփորդական փաստաթուղթը վկայում է այն մասին, որ փաստաթղթի կրողը հանդիսանում է քաղաքացիություն չունեցող անձ՝ 1954թ. սեպտեմբերի 28-ի Կոնվենցիայի իմաստով:

2. Փաստաթուղթը պատրաստվում է առնվազն երկու լեզվով, որոնցից մեկն անգլերեն է կամ ֆրանսերեն:

3. Պայմանագրով պետությունները պետք է քննարկեն կից ներկայացված ճամփորդական փաստաթղթի նմուշի ընդունման նպատակահարմարությունը:

Կետ 2

Փաստաթուղթը տվող երկրում ընդունված կանոններով պայմանագրված երեխաները կարող են գրանցվել ծնողի կամ, բացառիկ դեպքերում, մեկ այլ չափահաս անձի ճամփորդական փաստաթղթում:

Կետ 3

Փաստաթուղթը տալու համար գանձվող տուրքը չպետք է գերազանցի ներպետական անձնագիր տալու համար գանձվող նվազագույն վճարը:

Կետ 4

Բացառությամբ հատուկ կամ արտակարգ դեպքերի, փաստաթուղթը վավերական է հնարավորինս շատ երկրների համար:

Կետ 5

Փաստաթուղթը պետք է վավերական լինի երեք ամսից ոչ պակաս և երկու տարուց ոչ ավել ժամկետով:

Կետ 6

1. Փաստաթղթի վերականգնումը կամ վավերականության երկարաձգումը փաստաթուղթը տված իշխանության իրավասությունն է, քանի դեռ այն կրողը օրինական բնակություն չի հաստատել մեկ այլ տարածքում և օրինական կարգով բնակվում է նշված իշխանության տարածքում: Նոր փաստաթուղթ տալը, միևնույն պայմաններով, նախորդ փաստաթուղթը տված իշխանության իրավասությունն է:

2. Դիվանագիտական և հյուպատոսական մարմինները, որոնք հատուկ լի-ազորված են այդ նպատակով, իրավունք ունեն վեց ամիսը չգերազանցող ժամկետով երկարաձգել իրենց կառավարությունների կողմից տրված ճամփորդական փաստաթղթերի վավերականությունը:

3. Պայմանավորվող պետությունները քարեհած են վերաբերվում այն քա-դաքացիություն չունեցող անձանց ճամփորդական փաստաթղթերի վերա-կանգնմանը կամ վավերականության երկարաձգմանը կամ նրանց նոր փաստաթղթեր տալուն, ովքեր այլևս օրինական կարգով չեն բնակվում նրանց տարածքում և ի վիճակի չեն ճամփորդական փաստաթուղթ ստա-նալ իրենց օրինական բնակության երկրից:

Կետ 7

Պայմանավորվող պետությունները ճանաչում են սույն Կոնվենցիայի 28-րդ հոդվածի դրույթներին համապատասխան տրված ճամփորդական փաս-տաթղթերի վավերականությունը:

Կետ 8

Եթե այն երկրի իրավասու իշխանությունները, ուր քաղաքացիություն չու-նեցող անձը ցանկանում է ուղևորվել պատրաստ են ընդունելու նրան և եթե պահանջվում է մուտքի արտոնագիր, նրանք մուտքի արտոնագիրն ամրացնում են տվյալ անձին պատկանող փաստաթղթին:

Կետ 9

1. Պայմանավորվող պետությունները պարտավորվում են տարանցիկ մուտքի արտոնագրեր տալ այն քաղաքացիություն չունեցող անձանց, ով-քեր մուտքի արտոնագիր են ստացել վերջնական նշանակման տարածքի համար:

2. Նման մուտքի արտոնագրերը կարող են մերժվել նույն պատճառներով, ինչ պատճառներով կարդարացվեր ցանկացած օտարերկրացու մուտքի արտոնագրի մերժումը:

Կետ 10

Եթի, մուտքի կամ տարանցիկ մուտքի արտոնագրերի համար գանձվող տուրքերը չպետք է գերազանցեն օտարերկրյա անձնագրերով մուտքի ար-տոնագրի համար վճարումների նվազագույն չափը:

Կետ 11

Երբ քաղաքացիություն չունեցող անձը օրինական կարգով բնակություն է հաստատել պայմանավորվող մեկ այլ պետության տարածքում, 28-րդ հոդվածի դրույթներին և պայմաններին համապատասխան նոր փաստաթուղթ տալու պատասխանատվությունը կրում է այդ տարածքի իրավասու իշխանությունը, որին քաղաքացիություն չունեցող անձը իրավունք ունի դիմելու:

Կետ 12

Նոր փաստաթուղթ տվող իշխանությունը հին փաստաթուղթը հետ է վերցում և վերադարձնում այն տված պետությանը, եթե փաստաթղթում նըշված է, որ պետք է վերադարձվի. այլապես, փաստաթուղթը հետ է վերցվում և չեղյալ հայտարարվում:

Կետ 13

1. ճամփորդական փաստաթուղթը, սույն Կոնվենցիայի 28-րդ հոդվածին համապատասխան, թույլ է տալիս փաստաթուղթը կրողին դրա վավերականության ընթացքում ցանկացած ժամանակ կրկին մուտք գործել փաստաթուղթը տված պետության տարածք, եթե փաստաթղթում հակառակի մասին հայտարարություն առկա չէ: Ցանկացած դեպքում այն ժամանակահատվածը, որի ընթացքում փաստաթուղթը կրողը կարող է վերադանալ փաստաթուղթը տված պետություն, չպետք է լինի երեք ամսից պակաս, բացառությամբ այն դեպքերի, երբ երկիրը, որտեղ քաղաքացիություն չունեցող անձը նախատեսում է ճամփորդել, չի պահանջում ճամփորդական փաստաթուղթ՝ կրկին մուտք գործելու իրավունքին համապատասխան:

2. Նախորդ ենթակետի դրույթներին համապատասխան, պայմանավորվող պետությունը կարող է պահանջել, որ փաստաթուղթը կրողը ենթարկվի իր տարածքից եթի կամ այնտեղ վերադարձնալու համար նախատեսված ձևականություններին:

Կետ 14

Միայն 13-րդ կետի պայմանների պահպանմամբ՝ սույն ցանկի դրույթները ոչ մի կերպ չեն ազդում պայմանավորվող պետությունների տարածք մուտքի թույլտվության, այնտեղով տարանցիկ անցնելու, այնտեղ բնակվելու և հաստատվելու, այնտեղից դուրս գալու պայմանները կանոնակարգող օրենքների և ենթաօրենսդրական ակտերի վրա:

Կետ 15

Ո՞չ փաստաթուղթը տալը, ո՞չ դրանում կատարված գրառումները չեն որոշում այն կրողի կարգավիճակը, մասնավորապես, քաղաքացիության առնչությամբ:

Կետ 16

Փաստաթուղթը տալը այն կրողին որևէ կերպ չի տալիս տված երկրի դիվանագիտական կամ հյուպատոսական մարմիններից պաշտպանություն հայցելու իրավունք և այդ փաստի ուժով իշխանություններին չի վերապահում պաշտպանության իրավունք:

ՀԱՎԵԼՎԱԾ

ՃԱՍՏՈՐԴԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԻ ՆՄՈՒԾ

Փաստաթուղթը պետք լինի գրքույկի ձևով (մոտավորապես 10 x 15 սմ): Հանձնարարվում է այն տպագրել այնպես, որպեսզի քիմիական կամ այլ միջոցներով կատարված որևէ ջնջում կամ փոփոխություն հնարավոր լինի հեշտությամբ նկատել և "1954թ. սեպտեմբերի 28-ի Կոնվենցիա" բառերը, փաստաթուղթը տվող երկրի լեզվով շարունակաբար կրկնվելով, տպագրվում են յուրաքանչյուր էջին:

(Գրքույկի կազմը)

ՃԱՍՏՈՐԴԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

(1954թ. սեպտեմբերի 28-ի Կոնվենցիա)

N.....

(1)

ՃԱՍՏՈՐԴԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

(1954թ. սեպտեմբերի 28-ի Կոնվենցիա)

Սույն փաստաթուղթը վավեր է մինչև եթե դրա վավերականությունը չի երկարաձգվում կամ վերականգնվում:

Անուն

Ազգանուն(ներ)

Նրան ուղեկցում է երեխա (երեխաներ):

1. Սույն փաստաթուղթը տրվում է այն կրողին ճամփորդական փաստաթղթով ապահովելու նպատակով միայն և կարող է ծառայել ներպետական անձնագրի փոխարեն: Այն չի խանգարում կրողի քաղաքացիությանը և չի ազդում դրա վրա:

2. Կրողին թույլատրվում է վերադառնալ [նշել այն երկիր, որի իշխանությունները տվել են փաստաթուղթը] -ին կամ մինչև եթե ստորև չի նշվում ավելի ուշ ժամկետ: [Այն ժամանակահատվածը, որի ընթացքում կրողն իրավունք ունի վերադառնալ երեք ամաց պակաս չափորոշիչ է լինի, բացառությամբ այն դեպքերի, երբ երկիրը, որտեղ կրողը նախատեսում է ճամփորդել, չի պահանջում ճամփորդական փաստաթուղթ՝ կրկին մուտք գործելու իրավունքին համապատասխան]:

3. Եթե կրողը բնակություն հաստափի մի երկրում, որն այլ է, քան սույն փաստաթուղթը տված երկիրը, ապա նա պետք է, եթե ցանկանում է կրկին ճամփորդել, նոր փաստաթղթի համար դիմել իր բնակության երկրի իրավասու իշխանություններին: [Նոր փաստաթուղթը տված իշխանությունը կին ճամփորդական փաստաթուղթը հետ է վերցնում և վերադարձնում այն տված իշխանությանը]¹:

(Սույն փաստաթուղթը բաղկացած է 32 էջից՝ չհաշված կազմը):

(2)

Ծննդյան թվականը և վայրը.....

Զբաղմունքը.....

Ներկա բնակությունը

*Կնոջ օրիորդական անունը և ազգանունը /ները/

¹ Փակագծերում նշված նախադասությունը կարող է ներառվել այն Կառավարությունների կողմից, որոնք այդպես կցանկանան:

*Ամուսնու անունը և ազգանունը /ները/
.....

Նկարագրություն

Հասակը
Սագերը
Աչքերի գույնը
Քիթը
Դեմքի գծագրությունը
Կազմվածքը
Հատուկ նշաններ

Կրողին ուղեկցող երեխաներ

Անուն	Ազգանուն(ներ)	Ծննդյան թվականը և վայրը	Սեռը
.....
.....
.....

* Զնշել ինչն ավելորդ է:

(Սույն փաստաթուղթը բաղկացած է 32 էջից՝ չհաշված կազմը:)

(3)

Կրողի լուսանկարը և փաստաթուղթը տվող մարմնի կնիքը
Կրողի մատնահետքերը (Եթե պահանջվում է)
Կրողի ստորագրությունը
(Սույն փաստաթուղթը բաղկացած է 32 էջից՝ չհաշված կազմը:)

(4)

1. Սույն փաստաթուղթը վավերական է հետևյալ երկրների համար.

.....
.....
.....

2. Փաստաթուղթը կամ փաստաթղթեր, որոնց հիման վրա տրվել է սույն փաստաթուղթը

.....
.....
.....

Տրված է-ում

Ամսաթիվ-

Փաստաթուղթը տվող մարմնի ստորագրությունը և կնիքը

Վճարված է տուրք՝

(Սույն փաստաթուղթը բաղկացած է 32 էջից՝ չհաշված կազմը:)

(5)

Վավերականության երկարաձգում կամ վերականգնում

Վճարված է տուրք՝-ից
Մինչև
Կատարված է Ամսաթիվ
.....-ում

Փաստաթղթի վավերականությունը երկարաձգող կամ վերականգնող մարմնի ստորագրությունը և կնիքը

Վավերականության երկարաձգում կամ վերականգնում

Վճարված է տուրք՝-ից
Մինչև
Կատարված է Ամսաթիվ
.....-ում

Փաստաթղթի վավերականությունը երկարաձգող կամ վերականգնող մարմնի ստորագրությունը և կնիքը

(Սույն փաստաթուղթը բաղկացած է 32 էջից՝ չհաշված կազմը:)

(6)

Վավերականության երկարաձգում կամ վերականգնում

Վճարված է տուրք՝-ից
	Մինչև
Կատարված	Ե Ամսաթիվ
.....-ում	

Փաստաթղթի վավերականությունը երկարաձգող կամ վերականգնող մարմնի ստորագրությունը և կնիքը

Վավերականության երկարաձգում կամ վերականգնում

Վճարված է տուրք՝-ից
	Մինչև
Կատարված	Ե Ամսաթիվ
.....-ում	

Փաստաթղթի վավերականությունը երկարաձգող կամ վերականգնող մարմնի ստորագրությունը և կնիքը

(Սույն փաստաթուղթը բաղկացած է 32 էջից՝ չհաշված կազմը:)

(7-32)

Սուտքի արտօնագրեր

Փաստաթուղթը կրողի անունը պետք է կրկնվի մուտքի յուրաքանչյուր արտոնագրում:

(Սույն փաստաթուղթը բաղկացած է 32 էջից՝ չհաշված կազմը:)

♦ Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել **1994** թվականի օգոստոսի **16-ից**

ԿՈՆՎԵՆՑԻԱ

Ապաքաղաքացիության կրծատման մասին*

(30 օգոստոսի, 1961թ.)

Պայմանավորվող պետությունները,

գործելով Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամրեայի կողմից 1954թ. դեկտեմբերի 4-ին ընդունված 896(IX) բանաձևի համաձայն,

ցանկալի համարելով կրծատել ապաքաղաքացիությունը միջազգային համաձայնագրով,

համաձայնեցին ներքոհիշյալի շուրջ.

Հոդված 1

1. Ցանկացած Պայմանավորվող պետություն իր քաղաքացիությունը շնորհում է իր տարածքում ծնված ցանկացած անձի, որն այլապես կդառնար քաղաքացիություն չունեցող անձ: Այդպիսի քաղաքացիություն շնորհվում է՝

(ա) ծնվելիս՝ օրենքի ուժով, կամ

(բ) շահագրգիռ անձի կողմից կամ նրա անունից համապատասխան մարմնիմ՝ ներպետական օրենսդրությամբ սահմանված կարգով դիմում ներկայացնելու միջոցով: Սույն հոդվածի 2-րդ կետի դրույթների պահպանամբ, ճաման ոչ մի դիմում չի կարող մերժվել: Ցանկացած Պայմանավորվող պետություն, որը նախատեսում է իր քաղաքացիության շնորհումը սույն կետի (բ) ենթակետին համապատասխան, կարող է նախատեսել իր քաղաքացիության շնորհումն օրենքի ուժով այն տարիքուն և այնպիսի պայմաններով, որոնք կսահմանվեն ներպետական օրենսդրությամբ:

2. Ցանկացած Պայմանավորվող պետություն կարող է իր քաղաքացիությունը շնորհել սույն հոդվածի 1-ին կետի (բ) ենթակետին համապատասխան հետևյալ մեկ կամ մի քանի պայմաններով՝

(ա) որ դիմումը ներկայացվի այդ Պայմանավորվող պետության սահ-

* Պաշտոնական թարգմանություն

մանած ժամկետում, որն սկսվում է տասնութամյա հասակից ոչ ոչ և ավարտվում քանինելամյա հասակից ոչ շուտ, սակայն այնպես, որպեսզի շահագրգիռ անձին տրամադրվի առնվազն մեկ տարի, որի ընթացքում նա կարող է ինքը դիմում ներկայացնել՝ առանց դրա համար օրինական թույլտվություն ստանալու անհրաժեշտության,

(բ) որ շահագրգիռ անձը մշտապես բնակվի այդ Պայմանավորվող պետության տարածքում այդ պետության սահմանած ժամկետում, որը չափում է գերազանցի դիմում ներկայացնելուն անմիջապես նախորդող հինգ տարին, իսկ ընդհանրապես չափում է գերազանցի տապահություն,

(գ) որ տվյալ անձը դատապարտված չինի ազգային անվոանգության դեմ ուղղված հանցագործության համար կամ քրեական մեղադրանքով դատապարտված չինի ազատազրկման հինգ տարի կամ ավելի ժամկետով,

(դ) որ շահագրգիռ անձը միշտ քաղաքացիություն չունեցող անձ եղած լինի:

3. Զնայած սույն հոդվածի 1-ին կետի (բ) ենթակետի և 2-րդ կետի դրույթներին՝ որևէ Պայմանավորվող պետության տարածքում ամուսնությունից ծնված երեխան, որի մայրն ունի այդ պետության քաղաքացիությունը, ծնվելիս ձեռք է բերում այդ քաղաքացիությունը, այլապես նա կդառնա քաղաքացիություն չունեցող անձ:
4. Ցանկացած Պայմանավորվող պետություն իր քաղաքացիությունը շնորհում է ցանկացած անձի, որն այլապես կդառնար քաղաքացիություն չունեցող անձ և որը չի կարող ձեռք բերել այն Պայմանավորվող պետության քաղաքացիությունը, որի տարածքում ծնվել է՝ իր դիմունը ներկայացնելու տարիքից դուրս գալու կամ բնակության պահանջվող պայմանները չքավարելու պատճառով, եթե այդ անձի ծնվելու ժամանակ նրա ծնողներից որևէ մեկն ունեցել է վերոհիշյալ Պայմանավորվող պետություններից առաջինի քաղաքացիությունը: Եթե նրա ծնվելու ժամանակ նրա ծնողները չունեին միևնույն քաղաքացիությունը, այն հարցը, թե տվյալ անձի քաղաքացիությունը պես է հետևի հոր, թե մոր քաղաքացիությանը, որոշվում է այդ Պայմանավորվող պետության ներպետական օրենսդրությամբ: Եթե այդպիսի քաղաքացիության համար պահանջվում է դիմում ներկայացնել, դիմումը համապատասխան մարմնին դիմումատուի կողմից կամ նրա անունից ներկայացվում է այդ ներպետական օրենսդրությամբ սահմանված

Ապաքաղաքացիության կրծատման մասին կոնվենցիա (30 օգոստոսի, 1961թ.)

կարգով: Սույն հոդվածի 5-րդ կետի դրույթների պահպանմամբ, նման դիմումը չի մերժվում:

5. Պայմանավորվող պետությունը կարող է իր քաղաքացիությունը շնորհել սույն հոդվածի 4-րդ կետի դրույթներին համապատասխան՝ հետևյալ մեկ կամ մի քանի պայմաններով՝

(ա) որ դիմումը ներկայացվի նախքան դիմումատուի՝ այդ Պայմանավորվող պետության կողմից սահմանված տարիքին հասնելը, որը չպետք է ցածր լինի քսաններեք տարեկանից,

(բ) որ շահագրգիռ անձը մշտապես բնակվի այդ Պայմանավորվող պետության տարածքում այդ պետության սահմանած ժամկետի ընթացքում, որը չպետք է գերազանցի դիմում ներկայացնելուն անմիջապես նախորդող երեք տարին,

(գ) որ շահագրգիռ անձը միշտ քաղաքացիություն չունեցող անձ եղած լինի:

Հոդված 2

Որևէ Պայմանավորվող պետության տարածքում հայտնաբերված երեխան, հակառակ ապացույցների բացակայության դեպքում, համարվում է այդ տարածքում այդ պետության քաղաքացիություն ունեցող ծնողներից ծնված:

Հոդված 3

Սույն Կոնվենցիայի համաձայն Պայմանավորվող պետությունների պարտավորությունների սահմանման նպատակով ծնունդը նավի վրա կամ ինքնաթիռում համարվում է տեղի ունեցած համապատասխանաբար այն պետության տարածքում, որի դրոշի ներքո լրդում է նավը կամ այն պետության տարածքում, որտեղ գրանցված է ինքնաթիռը:

Հոդված 4

1. Ցանկացած Պայմանավորվող պետություն իր քաղաքացիությունը շնորհում է Պայմանավորվող պետության տարածքում չժնված ցանկացած անձի, որն այսպես կդառնար քաղաքացիություն չունեցող անձ, եթե այդ անձի ծնվելու ժամանակ նրա ծնողներից որևէ մեկն ունեցել է այդ պետության քաղաքացիությունը: Եթե նրա ծնվելու ժամանակ նրա ծնողները չունեին միևնույն քաղաքացիությունը, այն հարցը, թե տվյալ անձի քաղաքացիությունը պետք է հետևի հոր, թե

մոր քաղաքացիությանը, որոշվում է այդ Պայմանավորվող պետության ներպետական օրենսդրությամբ: Սույն կետի դրույթների համաձայն շնորհվող քաղաքացիությունը շնորհվում է՝

(ա) ծնվելիս՝ օրենքի ուժով, կամ

(բ) շահագրգիռ անձի կողմից կամ նրա անունից համապատասխան մարմնին՝ ներպետական օրենսդրությամբ սահմանված կարգով դիմում ներկայացնելու միջոցով: Սույն հոդվածի 2-րդ կետի դրույթների պահպանմամբ, նման ոչ մի դիմում չի կարող մերժվել:

2. Ցանկացած Պայմանավորվող պետություն կարող է սույն հոդվածի 1-ին կետի դրույթներին համապատասխան իր քաղաքացիությունը շնորհել հետևյալ մեկ կամ մի քամի պայմանմերով՝

(ա) որ դիմումը ներկայացվի նախքան դիմումատուի՝ այդ Պայմանավորվող պետության կողմից սահմանված տարիքին հասնելը, որը չպետք է ցածր լինի քանակությամբ տարեկանից,

(բ) որ շահագրգիռ անձը մշտապես քննակի այդ Պայմանավորվող պետության տարածքում այդ պետության սահմանած ժամկետում, որը չպետք է գերազանցի դիմում ներկայացնելուն անմիջապես նախրդող երեք տարին,

(գ) որ տվյալ անձը դատապարտված չլինի ազգային անվտանգության դեմ ուղղված հանցագործության համար,

(դ) որ տվյալ անձը միշտ քաղաքացիություն չունեցող անձ եղած լինի:

Հոդված 5

- Եթե որևէ Պայմանավորվող պետության օրենսդրություն նախատեսում է քաղաքացիության կորուստ համապատասխան անձի անձնական կարգավիճակում այնպիսի փոփոխությունների հետևանքով, ինչպիսին են ամուսնությունը, ամուսնալուծությունը, օրինականացումը, ձանաշումը կամ որդեգրումը, այդպիսի կորուստը պայմանավորվում է այլ քաղաքացիություն ունենալու կամ ձեռք բերելու հանգամանքով:
- Եթե որևէ Պայմանավորվող պետության օրենսդրության համաձայն արտամուսնական կապից ծնված երեխան կորցնում է այդ պետության քաղաքացիությունը հայրության ձանաշման հետևանքով, նրան հնարավորություն է ընձեռնվում այդ քաղաքացիությունը վերականգնել համապատասխան մարմնին գրավոր դիմելու միջոցով, և նման

Ապարադաքաջիության կրծատման մասին կոնվենցիա (30 օգոստոսի, 1961թ.)

Դիմումը կանոնակարգող պայմանները չպետք է առավել խիստ լինեն, քան սույն Կոնվենցիայի 1-ին հոդվածի 2-րդ կետում սահմանվածները:

Հոդված 6

Եթե որևէ Պայմանավորվող պետության օրենսդրություն նախատեսում է իր քաղաքացիության կորուստը որևէ անձի ամուսնու կամ երեխաների կողմից, այդ անձի կողմից այդ քաղաքացիությունը կորցնելու կամ այդ անձին այդ քաղաքացիությունից գրելու հետևանքով, այդպիսի կորուստը պայմանավորվում է նրան կողմից այլ քաղաքացիություն ունենալու կամ ձեռք բերելու հանգամանքով:

Հոդված 7

1. (ա) Եթե որևէ Պայմանավորվող պետության օրենսդրություն նախատեսում է քաղաքացիության կորուստ կամ դրանից հրաժարում, նման հրաժարումը չի առաջացնում քաղաքացիության կորուստ, եթե տվյալ անձը չունի կամ ձեռք չի բերել այլ քաղաքացիություն,
(բ) սույն կետի (ա) ենթակետի դրույթները չեն կիրառվում այն դեպքերում, եթե դրանց կիրառումը հակասում է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից 1948թ. դեկտեմբերի 10-ին հաստատված Մարդու իրավունքների համընդհանուր հոչակագրի 13 և 14-րդ հոդվածներում շարադրված սկզբունքներին:
2. Պայմանավորվող պետության քաղաքացին, որը ցանկանում է ձեռք բերել օտար պետության քաղաքացիություն, չի կորցնում իր քաղաքացիությունը, քանի դեռ ձեռք չի բերում կամ չի ստանում այդ օտար երկրի քաղաքացիության ձեռքբերման հավաստում:
3. Սույն հոդվածի 4-րդ և 5-րդ կետերի դրույթների պահպանամբ, Պայմանավորվող պետության քաղաքացին իր քաղաքացիությունը չի կորցնում այնպես, որպեսզի դառնա քաղաքացիություն չունեցող անձ՝ մեկնելու, արտասահմանում բնակվելու, չգրանցվելու կամ նմանատիպ այլ հիմքով:
4. Հպատակագրված անձը կարող է կորցնել իր քաղաքացիությունը համապատասխան Պայմանավորվող պետության օրենսդրությամբ սահմանված ժամկետի ընթացքում արտասահմանում բնակվելու հետևանքով, որը չպետք է լինի յոթ հաջորդական տարիներից պակաս, եթե նա համապատասխան մարմնին չի հայտնում իր քաղաքացիությունը պահպանելու մտադրության մասին:

5. Որևէ Պայմանավորվող պետության քաղաքացու պարագայում, որը ծնվել է այդ Պետության տարածքից դուրս, այդ պետության օրենսդրությունը կարող է սահմանել իր քաղաքացիության պահպանումը նրա՝ չափահաս դառնալուց հետո մեկ տարվա ընթացքում՝ այդ ժամանակ այդ պետության տարածքում բնակվելու կամ համապատասխան մարմնում գրանցվելու պայմանով:
6. Քացառությամբ սույն հոդվածում հիշատակված հանգամանքների, անձը չի կորցնում որևէ Պայմանավորվող պետության քաղաքացիությունը, եթե այդպիսի կորուստն այդ անձին կրարձներ քաղաքացիություն չունեցող անձ՝ չնայած, որ այդպիսի կորուստն ուղղակիորեն չի արգելվում սույն Կոնվենցիայի որևէ այլ դրույթով:

Հոդված 8

1. Ոչ մի Պայմանավորվող պետություն որևէ անձի չի գրկում իր քաղաքացիությունից, եթե գրկելն այդ անձին կրարձներ քաղաքացիությունը չունեցող անձ:
2. Չնայած սույն հոդվածի 1-ին կետի դրույթներին՝ անձը կարող է գրկել ցանկացած Պայմանավորվող պետության քաղաքացիությունից
 - (ա) այնպիսի հանգամանքներում, որոնց դեպքում քաղաքացիության կորուստը թույլատրվում է 7-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերի համաձայն,
 - (բ) եթե քաղաքացիությունը ձեռք է բերվել սխալ տեղեկություններ հայտնելու կամ խարեւության հետևանքով:
3. Չնայած սույն հոդվածի 1-ին կետի դրույթներին՝ ցանկացած Պայմանավորվող պետություն կարող է պահպանել ցանկացած անձի՝ իր քաղաքացիությունից գրկելու իրավունքը, եթե ստորագրման, վավերացման կամ միանալու ժամանակ նշում է, որ պահպանում է նման իրավունքը հետևյալ մեկ կամ ավելի հիմքերով, որոնք այդ ժամանակ նախատեսված են իր ներպետական օրենսդրությամբ.
 - (ա) որ, տվյալ Պայմանավորվող պետության նկատմամբ լոյալության իր պարտականությանն անհամապատասխան, այդ անձը՝
 - (ի) անտեսելով այդ Պայմանավորվող պետության կողմից ուղղակի արգելքը՝ ծառայություններ է մատուցել կամ շարունակում է մատուցել այլ պետության, կամ վարձադրություն է ստացել կամ շարունակում է ստանալ այլ պետությունից, կամ

Ապաքաղաքացիության կրծատման մասին կոնվենցիա (30 օգոստոսի, 1961թ.)

- (ii) իր վարքագծով լրջորեն խոչընդոտում է այդ պետության կենսական շահերին,
- (թ) որ տվյալ անձը հավատարմության երդում է տվել կամ հավատարմության պաշտոնական հայտարարություն է արել այլ պետության կամ որոշակի ապացույց է տվել այդ Պայմանավորվող պետության նկատմամբ հավատարմությունից հրաժարվելու իր մտադրության մասին:
4. Ոչ մի Պայմանավորվող պետություն չի իրականացնում սույն հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն թույլատրվող՝ քաղաքացիությունից զրկելու իրավասությունն այլ կերպ, քան օրենքին համապատասխան, որը նախատեսում է շահագրգիռ անձի՝ դատարանում կամ այլ անկախ մարմնում իր գործի արդար քննության իրավունք:

Հոդված 9

Ոչ մի Պայմանավորվող պետություն որևէ անձի կամ անձանց խմբի չի կարող զրկել քաղաքացիությունից՝ ռասայական, էթնիկական, կրոնական կամ քաղաքական հիմքերով:

Հոդված 10

1. Պայմանավորվող պետությունների միջև ցանկացած պայմանագիր, որը նախատեսում է տարածքի փոխանցում, պետք է բովանդակի դրույթներ, որոնք նպատակատղված են երաշխավորելու, որ ոչ մի անձ այդպիսի փոխանցման հետևանքով չի դառնա քաղաքացիություն չունեցող անձ: Ցանկացած Պայմանավորվող պետություն օգտագործում է իր լավագույն ջանքերը, որպեսզի սույն Կոնվենցիայի մասնակից չհանդիսացն պետության հետ իր կողմից կնքված ցանկացած նման պայմանագիր բովանդակի նման դրույթներ:
2. Նման դրույթների բացակայության դեպքում ցանկացած Պայմանավորվող պետություն, որին փոխանցվում է տարածքը կամ որն այլ եղանակով ձեռք է բերում տարածք, իր քաղաքացիությունը տրամադրում է այն անձանց, որոնք այլապես կդատնային քաղաքացիություն չունեցող անձինք այդպիսի փոխանցման կամ ձեռքբերման հետևանքով:

Հոդված 11

Պայմանավորվող պետությունները վեցերորդ վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթը ի պահ համձնելուց հետո հնարավորինս շուտ աջակցում են Միավորված ազգերի կազմակերպության շրջանակներում այնպիսի մարմնի ստեղծմանը, որին կարող է դիմել սույն Կոնվենցիայի հիմնա վրա արտոնություն հայցող անձը՝ իր դիմումը քննության առնելու և այն համապատասխան մարմնին ներկայացնելու կապակցությամբ աջակցության համար:

Հոդված 12

1. Այն Պայմանավորվող պետության կապակցությամբ, որը սույն Կոնվենցիայի 1-ին հոդվածի 1-ին կետի կամ 4-րդ հոդվածի դրույթներին համապատասխան, իր քաղաքացիությունը չի շնորհում ծննվելիս՝ օրենքի ուժով, 1-ին հոդվածի 1-ին կետի կամ 4-րդ հոդվածի դրույթները համապատասխանաբար կիրառվում են մինչև սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելը ծննված անձանց, ինչպես նաև դրանց հետո ծննված անձանց նկատմամբ:
2. Սույն Կոնվենցիայի 1-ին հոդվածի 4-րդ կետի դրույթները կիրառվում են մինչև սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելը ծննված, ինչպես նաև դրանց հետո ծննված անձանց նկատմամբ:
3. Սույն Կոնվենցիայի 2-րդ հոդվածի դրույթները կիրառվում են միայն տվյալ “Պայմանավորվող պետության տարածքում” այդ պետության համար սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո հայտնաբերված երեխաների նկատմամբ:

Հոդված 13

Սույն Կոնվենցիան չի մեկնաբանվում ի վճառ որևէ այնպիսի դրույթի, որն ավելի է նպաստում ապաքաղաքացիության կրծատմանը և որը կարող է բռվանդակվել որևէ Պայմանավորվող պետության գործող օրենսդրության մեջ կամ բռվանդակվել հետաքայում կամ կարող է բռվանդակվել որևէ այլ կոնվենցիայում, պայմանագրում կամ համաձայնագրում, որոնք այժմ կամ հետագայում ուժի մեջ կիմեն երկու կամ ավելի Պայմանավորվող պետությունների միջև:

Հոդված 14

Սույն Կոնվենցիայի մեկնաբանման կամ կիրառման վերաբերյալ Պայմանագրովող պետությունների միջև ցանկացած վեճ, որը չի կարող լուծվել այլ միջոցներով, վեճի կողմերից յուրաքանչյուրի պահանջով փոխանցվում է Միջազգային դատարան:

Հոդված 15

1. Սույն Կոնվենցիան կիրառվում է ոչ ինքնավար, խնամարկյալ, գաղութային և մետրոպոլիայից դուրս գտնվող բոլոր տարածքների նկատմամբ, որոնց միջազգային հարաբերությունների համար պատասխանատու է ցանկացած Պայմանագրովող պետություն: Համապատասխանական Պայմանագրովող պետությունը, սույն հոդվածի 2-րդ կետի դրույթների պահպանմամբ, ստորագրման, վավերացման կամ միանալու ժամանակ, հայտարարում է մետրոպոլիայից դուրս գտնվող տարածքը կամ տարածքները, որոնց նկատմամբ սույն Կոնվենցիան կիրառվում է իրոք այդպիսի ստորագրման, վավերացման կամ միացման հետևանքով:
2. Ցանկացած դեպքում, եթե քաղաքացիության նպատակի համար մետրոպոլիայից դուրս գտնվող տարածքը չի դիտվում որպես մեկ ամբողջություն մետրոպոլիայի տարածքի հետ, կամ ցանկացած դեպքում, եթե մետրոպոլիայից դուրս գտնվող տարածքի նկատմամբ սույն Կոնվենցիայի կիրառման համար Պայմանագրովող պետության կամ մետրոպոլիայից դուրս գտնվող տարածքի սահմանադրական օրենքներով կամ պրակտիկայով պահանջվում է մետրոպոլիայից դուրս գտնվող տարածքի նախնական համաձայնությունը, այդ Պայմանագրովող պետությունը զանում է ապահովել մետրոպոլիայից դուրս գտնվող տարածքի անհրաժեշտ համաձայնությունը՝ այդ Պայմանագրովող պետության կողմից սույն Կոնվենցիան ստորագրելուց հետո տասներկու ամսվա ընթացքում, իսկ եթե ձեռք է բերվում նման համաձայնություն, այդ Պայմանագրովող պետությունն այդ մասին ծանուցում է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին: Սույն Կոնվենցիան կիրառվում է այդպիսի ծանուցման մեջ նշված տարածքի կամ տարածքների նկատմամբ՝ այն Գլխավոր քարտուղարի կողմից ստանալու օրվանից:

3. Սույն հոդվածի 2-րդ կետում իշխատակված տասներկուամյա ժամկետի լրանալոց հետո համապատասխան Պայմանավորվող պետությունները Գլխավոր քարտուղարին տեղեկացնում են մետրոպոլիալից դրւու գտնվող այն տարածքների հետ խորհրդակցությունների արդյունքների մասին, որոնց միջազգային հարաբերությունների համար իրենք պատասխանատու են, և որոնց համաձայնությունը սույն Կոնվենցիայի կիրառման վերաբերյալ կարող է մերժված լինել:

Հոդված 16

1. Սույն Կոնվենցիան բաց է ստորագրման Միավորված ազգերի կազմկերպության կենտրոնակայանում 1961թ. օգոստոսի 30-ից մինչև 1962թ. մայիսի 31-ը:
2. Սույն Կոնվենցիան բաց է ստորագրման՝
 - (ա) Միավորված ազգերի կազմակերպության ցանկացած անդամ պետության,
 - (բ) Միավորված ազգերի կազմակերպության Հետագա ապաքաղաքացիությունը վերացնելու կամ կրծատելու վերաբերյալ խորհրդաժողովին մասնակցելու հրավիրված ցանկացած այլ պետության:
3. Սույն Կոնվենցիան ենթակա է վավերացման և վավերագրերն ի պահ են համձնվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին:
4. Սույն Կոնվենցիան բաց է միանալու սույն հոդվածի 2-րդ կետում նշված պետությունների համար: Միանալը կատարվում է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին միանալու մասին վաստաթուղթն ի պահ համձնելու միջոցով:

Հոդված 17

1. Ցանկացած պետություն Կոնվենցիան ստորագրելիս, վավերացնելիս կամ միանալիս կարող է վերապահում կատարել 11, 14 և 15-րդ հոդվածների վերաբերյալ:

Ապաքաղաքացիության կրծատման մասին կոնվենցիա (30 օգոստոսի, 1961թ.)

2. Սույն Կոնվենցիայի նկատմամբ որևէ այլ վերապահում չի թույլատրվում:

Հոդված 18

1. Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում վեցերորդ վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելու օրվանից երկու տարի անց:
2. Յուրաքանչյուր պետության համար, որը սույն Կոնվենցիան վավերացնում կամ նրան միանում է վեցերորդ վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելուց հետո, այն ուժի մեջ է մտնում այդ պետության կողմից իր վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելուց հետո իննուններորդ օրը կամ սույն հոդվածի 1-ին կետի դրույթների համաձայն՝ սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու օրը, որն ավելի ուշ կլինի:

Հոդված 19

1. Ցանկացած Պայմանավորվող պետություն Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ուղղված գրավոր ծանուցմանք ցանկացած ժամանակ կարող է սույն Կոնվենցիան չեղյալ հայտարարել: Համապատասխան Պայմանավորվող պետության համար չեղյալ հայտարարելու ուժի մեջ է մտնում այն՝ Գլխավոր քարտուղարի կողմից ստանալու օրվանից մեկ տարի անց:
2. Այն դեպքում, եթե սույն Կոնվենցիան 15-րդ հոդվածի դրույթների համաձայն կիրառելի է դառնում որևէ Պայմանավորվող պետության մետրոպոլիայից դուրս գտնվող տարածքի նկատմամբ, այդ պետությունը համապատասխան տարածքի համաձայնությամբ կարող է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ցանկացած ժամանակ ծանուցել սույն Կոնվենցիան այդ տարածքի նկատմամբ առանձին չեղյալ հայտարարելու մասին: Չեղյալ հայտարարելու ուժի մեջ է մտնում նման ծանուցումը Գլխավոր քարտուղարի կողմից ստանալու օրվանից մեկ տարի անց, որը բոլոր մյուս Պայմանավորվող պետություններին տեղեկացնում է այդ ծանուցման և այն ստանալու օրվա մասին:

Հոդված 20

1. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը Միավորված ազգերի կազմակերպության բոլոր անդամ պետություններին և 16-րդ հոդվածում հիշատակված այդ Կազմակերպության անդամ չհանդիսացող պետություններին տեղեկացնում է հետևյալ մասին՝
 - (ա) 16-րդ հոդվածի համաձայն ստորագրման, վավերացումների և միացումների մասին,
 - (բ) 17-րդ հոդվածի համաձայն վերապահումների մասին,
 - (գ) 18-րդ հոդվածի համաձայն սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու օրվա մասին,
 - (դ) 19-րդ հոդվածի համաձայն չեղյալ հայտարարումների մասին:
2. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը վեցերորդ վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելուց հետո ոչ ուշ Գլխավոր ասամրեալի ուշադրությունը հրավիրում է 11-րդ հոդվածին համապատասխան դրանում հիշատակված մարմնի ստեղծման հարցի վրա:

Հոդված 21

Սույն Կոնվենցիան գրանցում է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը՝ դրա ուժի մեջ մտնելու օրը:

Ի հավաստում շարադրվածի՝ ներքոստորագրյալ լիազոր ներկայացուցիչներն ստորագրեցին սույն Կոնվենցիան:

Կատարված է Նյու Յորքում, 1961 թվականի օգոստոսի 30-ին, մեկ օրինակով, որի անգերեն, իսպաներեն, չինարեն, ռուսերեն և ֆրանսերեն տեքստերը հավասարացր են, և որը կապիվի Միավորված ազգերի կազմակերպության արխիվում, և որի հաստատված պատճենները Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը կուղարկի Միավորված ազգերի կազմակերպության բոլոր անդամներին և Միավորված ազգերի կազմակերպության անդամ չհանդիսացող՝ սույն Կոնվենցիայի 16-րդ հոդվածում հիշատակված պետություններին:

♦ Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1994 թվականի օգոստոսի 16-ից:



ՄԱԿ ՓԳՀ Հայաստան

Հեռ.՝ (+37410) 564771, 584892, 545935

Ֆաքս՝ (+37410) 567817

E-mail: ARMYE@unhcr.org